Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 19.03.2021թ. թիվ 2112424369 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<31>> 03 2021թ. 7-13- 5400 ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Դավիթ Ստեփանյանի ՄԴ/26975-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի Սայաթ-Նովա 2 նրբանցքի 6 տան բնակիչ Դավիթ Ստեփանյանը դիմումով խնդրել է բեկանել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112424369 որոշումը՝ հայտնելով իր անհամաձայնությունը իրավախախտման հետ:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112424369 որոշումը ենթակա է կատարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 251-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի ապացույցներ են համարվում ցանկացած այն փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով սահմանված կարգով մարմինները (պաշտոնատար անձինք) հաստատում են վարչական իրավախախտման առկայությունը կամ բացակայությունը, տվյալ անձի մեղավորությունը այն կատարելու մեջ և գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ այդ տվյալները հաստատվում են հետևյալ միջոցներով՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ, վարչական պատասխանատվության ենթարկվող անձի բացատրություններով, տուժողի, վկաների ցուցմունքներով, փորձագետի եզրակացությամբ, իրեղեն ապացույցներով, իրեր և փաստաթղթեր վերցնելու վերաբերյալ արձանագրությամբ, ինչպես նաև այլ փաստաթղթերով:

ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>>28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 51-րդ կետի համաձայն՝ ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցների համար երթևեկության գոտիների քանակը որոշվում է գծանշմամբ և (կամ) 5.15.1՝ «Երթևեկության ուղղությունները գոտիներով», 5.15.2՝

«Երթևեկության ուղղությունները գոտիով», 5.15.7՝ «Երթևեկությունը գոտիներով» և 5.15.8 «Գոտիների քանակը» նշաններով, իսկ եթե դրանք բացակայում են, ապա վարորդների կողմից՝ հաշվի առնելով երթևեկելի մասի լայնությունը, տրանսպորտային միջոցների եզրաչափերը և դրանց միջև անհրաժեշտ միջկողային տարածությունը:

Ճանապարհային ոստիկանության ճանապարհային երթևեկության կազմակերպման հսկողության բաժնի կողմից տրված 30.03.2021թ. տեղեկանքի համաձայն՝ Երևան քաղաքի Կոմիտաս պողոտա-Ն.Տիգրանյան փողոց խաչմերուկի հատվածում՝ Ն.Տիգրանյան փողոցում տեղադրված 5.15.1 <<Երթևեկության ուղղությունները գոտիներով>> ճանապարհային նշանը համապատասխանում է ՀՀ կառավարության 26.10.2006թ. 1699-Ն որոշման պահանջներին և տեսանելի է երթևեկության մասնակիցներին,համաձայն որի աջ եզրային գոտուց թույլատրվում է երթևեկել միայն դեպի աջ,ինչպես նաև իրավախախտման օրվա դրությամբ վերը նշված ճանապարհային նշանը չի բացակայել:

Վարույթի ընթացքում պարզվեց, որ վերը նշված փողոցների խաչմերուկի հատվածում դիմումատուին պատկանող տրանսպորտային միջոցը երթևեկել է տվյալ գոտու համար չթույլատրված ուղղությամբ,հետևաբար թույլ է տվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ճանապարհային նշանների կամ ճանապարհային գծանշումների պահանջները չկատարելը՝առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 36-րդ մասի համաձայն՝ ճանապարհային նշանների պահանջները չկատարելու համար սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ իրավախախտումն անխուսափելիորեն կատարվել է երթևեկության այլ մասնակցի գործողության կամ անգործության պատճառով:

Հարկ է նշել, որ <<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթը բաղկացած է իրավախախտման հատկանիշների պարզման և վարչական ակտի ընդունման փուլերից:

Նույն օրենքի 6-րդ հադվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավախախտման հատկանիշները պարզվում են 15 աշխատանքային օրում, նույն հոդվածի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝վարույթ իրականացնող մարմինը վարչական ակտը պարտավոր է ընդունել իրավախախտման հատկանիշները պարզելուց հետո՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում:

Այսինքն վարույթ իրականացնող մարմինը վարչական տույժ նշանակելու մասին որոշումը կարող է ընդունել 17 աշխատանքային օրվա ընթացքում:

Վիճարկվող որոշման հիմքում դրված իրավախախտումն արձանագրվել է 27.02.2021թ. իսկ վարչական ակտը կայացվել է 19.03.2021թ.՝ այսինքն վերը նշված օրենքով սահմանված ժամկետում:

Այսպիսով,հիմնավորվել է,որ վերը նշված որոշումը իրավաչափ է և օրինական:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 19.03.2021թ. թիվ 2112424369 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Դավիթ Ստեփանյանին:



Ե.Կարապետյան

Կատարող՝ Տ.Մարգարյան
Հեռ. 060-83-84-02